

Չմոռնանք նաև իր գրական անընդհատ լորձունելութիւնը, որով միշտ կճոխացնէր եկեղեցական գրականութիւնը, և իր բնուկան դիւրախօսութիւնը, որով կշապէր իր քարոզները, միշտ մեծ բազմութիւն մը քաշելով իր նախագահած հոգեոր արարողութիւններուն Չմոռնանք նաև տարօրինակ կերպով խիստ Ռէժիմն որոյ օրով պաշտօնավարեց, և որով պիտի բացատրուէին, պիտի լուսաբանուէին իրեն վերագրուած չատ մը թերութիւնք՝ Սրբարե. Կը ցաւինք որ անքան օժտեալ, այնքան կարող, այնքան խոստմնալից եկեղեցականի մը պաշտօնական կեանքն այսպիսի նսեմ վախճան մը կունենայ: Բայց կյուունք և կմազթինք, որ հանրային կարծիքն աւելի արդարութեամբ զատէ Օրմանեանն, երբ իր հաշիւները մատուցանէ Ազգային Ժողովին, և իր 12 տարուան լիակատար համարատուութիւնն ընէ Ազգին ընտրեալ ներկայացուցիչներուն առջև Մինչև որ այն հաշիւները չնայուին, զինք այժմէն իրը զերծանող ամրաստանելը միմիայն Դեռնդ վարդապետի կուսակիցներուն վրէժինողրական մէկ զործը կրնայ համարուիլ, որմէ պէտք չէ որ խարուինք»:

«Բիւզանդիան».

Յարգիլի խմբագրութեան «Արարա» ամսագրի

Մայր Աթոռի Վանական Կառավարութիւնը պատիւ ունի խնդրելու յարգելի խմբագրութեան գրատարակիել «Արարարի» մերձակայ համարում հետեւեալը:

Եղեշէ քահանայ, Յարուրի Խանլութալա գիւղից Վարդունեան Թարվերանեանց ապահովագրուած լինելով «Նիւ-իօրէ» ընկերութեան մէջ, և թիւս իր ազգականների, ժառանգ էր համարել նա և Մ. Աթոռին հինգ հարիւր ուուրլի գումարով: Թարվերանեանը վախճանուել է անցեալ 1907 թ. գեկտեմբերին և յիշեալ ընկերութեան 21 անցեալ Մայիսի գրութեան համաձայն Վանական Կառավարութիւնս ստացաւ այդ գումարը:

Հանգուցեալ Թարվերանեան քահանան, հարկաւ նախանձակնդիր է եղել Էջմիածնի շահերին և անշահասիրաբար այդ եղանակով է կամեցել իր լուսնան ձգել Մ. Աթոռի ազգատիկ գանձարանը և այդ իսկ հանգամանքը համարելով առաւել Առտուածահանոյ, Մայր Աթոռի միաբանութիւնը, Ամենապատիւ Տ. Տեղակալի հաճութեամբ, ամսոյս 13-ին Օ. պատարագից յետոյ, հանդիսաւոր հոգեհանդիստ կատարեց Մ. Տաճարում յանդորրութիւն հոգեւոյ հանգուցեալ Թարվերանեան քահանայի:

Ընդ սմին Կառավարութիւնս իր ցաւակցութիւնն է յայտնում հանգուցեալի ազգականներին:

Նախագահ Կառավարութեան Պետոնդ Եպիսկոպոս.

Քարտուղար Լ. Ազանեանց

